# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» դեկտեմբերի 2021 թվականի N 270-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԳՈՐԾՈՂ «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ» ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 30-ի N 116-Ն որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ հավելված) 13-րդ, 14-րդ կետերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հաշվի առնելով հավելվածի 4-րդ կետի, 8-րդ կետի 2-րդ, 9-րդ կետի 1-ին և 3-րդ, 16-րդ կետի 1-ին ենթակետերի դրույթները, Գյումրի համայնքի ավագանու խմբակցությունների՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունները (համայնքապետարանում մուտքագրված 2021 թվականի նոյեմբերի 24-ին և 25-ին NN 20738, 20702, 20705, 20711 և 20552 թվագրումներով)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ձևավորել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող «Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի» խորհրդակցական մարմին (այսուհետ՝ Խորհրդակցական մարմին):
2. Հաստատել Խորհրդակցական մարմնի կազմը՝ համաձայն հավելվածի:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

| Կողմ (27) | Դեմ (0) | Ձեռնպահ (2) |
|---|---|---|
| Վ.Սամսոնյան | | Կ.Մալխասյան |
| Հ.Սուլթանյան | | Կ.Ասատրյան |
| Լ. Սանոյան | | |
| Մ. Սահակյան | | |
| Տ. Հովհաննիսյան | | |
| Ա. Հովհաննիսյան | | |
| Ն. Պողոսյան | | |
| Գ.Պասկևիչյան | | |
| Խ. Վարաժյան | | |

Ս. Հովհաննիսյան
Ռ.Անդրիասյան
Ս.Առաքելյան
Ա. Բաղդասարյան
Ա. Բեյրուտյան
Ա.Պապիկյան
Ն. Ղազարյան
Հ. Նիկողայան
Գ. Թաթարյան
Ջ. Միքայելյան
Ե. Խանամիրյան
Ծ.Արամյան
Լ. Մուրադյան
Վ.Հակոբյան
Կ.Սոսյան
Ս. Ադամյան
Ն. Միրզոյան
Հ.Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ ԿԱՐԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ

ք. Գյումրի
«03» դեկտեմբերի 2021 թվական

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2021 թ վականի դեկտեմբերի 03-ի
N 270- Ա որոշման

## Կազմ

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի (այսուհետ՝ համայնք) ղեկավարին կից, հասարակական կարգով գործող «Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի» խորհրդակցական մարմնի (այսուհետ՝ ԽՄ)**

1. ԽՄ-ի նախագահ՝ Արթուր Պապիկյան – համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,
2. ԽՄ-ի քարտուղար՝ Արմինե Սարգսյան – համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի գլխավոր մասնագետ,
3. ԽՄ-ի անդամներ՝
   1) Հովհաննես Սահակյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ,
   2) Հենրիկ Գասպարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ,
   3) Աշոտ Միրզոյան – ճարտարապետ,
   4) Սուրեն Կուրազյան - ճարտարապետ,
   5) Լյովա Ղուկասյան – գեղանկարիչ,
   6) Վարդան Շախոյան– ճարտարապետ,
   7) Ինգա Ավագյան- համայնքի «Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժ/պ,
   8) Արման Շաքոյան – համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկի տնօրենի տեղակալ,
   9) Հրաչյա Մալխասյան - «Արտ-նախագիծ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն,
   10) Տիգրան Հովհաննիսյան – Գյումրի համայնքի ավագանու անդամ,
   11) Հասմիկ Մարգարյան – Գյումրի համայնքի ավագանու անդամ,
   12) Աստղիկ Բեյբուտյան – Գյումրի համայնքի ավագանու անդամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2022 թվականի N 34- Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 03-Ի N 270-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 03-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող «Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի» խորհրդակցական մարմին ձևավորելու, խորհրդակցական մարմնի հազմը հաստատելու մասին» N 270-Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումը.
   1) հավելվածի 3-րդ կետը լրացնել նոր 13-րդ և 14-րդ ենթակետերով՝
   «13) Ալբերտ Մարգարյան - Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական,
   14) Հովիկ Ղազարյան – ճարտարապետ:»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական Ալբերտ Մարգարյանին և ճարտարապետ Հովիկ Ղազարյանին պատշաճ իրազեկման ճրվան հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

| Կողմ (25) | Դեմ (0) | Ձեռնպահ (4) |
|---|---|---|
| Վ.Սամսոնյան | | Վ.Հակոբյան |
| Գ.Մելիքյան | | Կ. Սոսյան |
| Լ.Սանոյան | | Ս.Ադամյան |
| Մ.Սահակյան | | Գ.Մանուկյան |
| Տ.Հովհաննիսյան | | |
| Գ. Պասկևիչյան | | |
| Ն. Պողոսյան | | |
| Խ.Վարաժյան | | |
| Ս.Հովհաննիսյան | | |
| Հ.Ասատրյան | | |
| Ս.Խուբեսարյան | | |
| Ա.Բաղդասարյան | | |
| Ա.Բեյբուտյան | | |
| Ա.Պապիկյան | | |

Հ.Նիկողոսյան
Ք.Հարությունյան
Ն.Ղազարյան
Գ.Թաթարյան
Ե.Խանամիրյան
Ծ. Արամյան
Լ. Մուրադյան
Ն.Միրզոյան
Հ.Մարգարյան
Կ.Մալխասյան
Կ.Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԿԱՐԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ

ք. Գյումրի
«10» մարտի 2022 թվական